

Պերճագոյնը

Կարդա՛
Յայտնութիւն 5. 8-14

Այդ մորթուած
գարնուկը արժանի է:
—Յայտնութիւն 5. 12

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

■ Թուոց 23-25

■ Մարկոս 7. 14-37

Երբ առաջին անգամ հաւատացեալ դարձայ 19 տարեկանիս, սկսայ եկեղեցի յաճախել: Առաջին բանը որ պատահեցաւ, կը յիշեմ, սկսայ շատ սիրել հոգեւոր երգերը: Միրտս կը յորդէր ուրախութեամբ եւ գոհունակութեամբ, ամէն անգամ երբ կ'երգէին Աստուծոյ սիրոյն մասին՝ մեզի յայտնուած Քրիստոսի միջոցով: Շուտով Ամենապերճ Յիսուս երգը դարձաւ իմ նախասիրած երգս:

Ամենապերճ Յիսուս

Աշխարհի իշխան եւ լոյս

Աստուածորդի եւ Որդի Մարդոյ:

Քեզ միշտ պիտի սիրեմ,

Քեզ միշտ պիտի գովեմ:

Դու փառք հրճուանք եւ թազ հոգւոյս:

Սիրուն արօտավայր, գեղեցիկ եւս է անտառ,

Պճնազարդուած զգեստով գարնան:

Եւս փայլուն է Յիսուս, եւս շքեղ է Յիսուս,

Որ տայ երգել սրտին տրտմած:

Աստուծոյ Որդին, որուն կը փառաբանէինք այս երգով, եկաւ այս աշխարհ, ապրեցաւ կատարեալ կեանք մը, եւ ինքզինք զոհաբերեց խաչին վրայ՝ մեզի համար (Ղուկ. 23. 33): Ան գերեզմանէն յարեաւ (Ղուկ. 24. 6) եւ հիմա նստած է Աստուծոյ աջ կողմը (Եբր. 1. 3): Օր մը մենք ալ միանալով ուրիշ հազարաւորներու, միասնաբար պիտի փառաբանենք երգելով.— «Գահին վրայ բազմողին եւ Գառնուկին՝ օրհնաբանութիւնս, պատիւ, փառք ու զօրութիւն, դարէ դար» (Եբր. 5. 13): Թերեւս պիտի երգենք նաեւ Ամենապերճ Յիսուս երգը: Մինչ այդ, թոյլ տանք, որ Յիսուս ըլլայ մեզի համար «Ամենապերճը» մեր անձնական կեանքէն ներս, եւ ամէն բանէ առաջ փնտռենք իր խօսքերէն բխած իմաստութիւնը եւ հետեւինք իրեն:

Որժան ալ փառաբանելու ըլլանք Յիսուսը,
այդ երբեք չի կրնար շատ ըլլալ:

Աստուած Հոս է

Կարդա՛
Ղուկաս 4. 16-21

(Տէրը) կոտրած սիրտ
ունեցողները կը բուժէ,
եւ անոնց վերքերը կը
փաթթէ:
—Սաղմոս 147. 3

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ
ՏԱՐՈՒՆ ՄԷՁ

- Թուոց 26-27
- Մարկոս 8. 1-21

Լէսլի եւ իր երկու աղջիկները իրենց տունէն դուրս դրուելու վտանգին մէջ էին: Թէեւ Լէսլի կը հաւատար, թէ Աստուած կրնար օգնել իրեն, սակայն մինչ այդ ատեն, նշան մը չէր յայտնուած իրեն, թէ ինչպէ՞ս պիտի օգնէր: Ան հարց կու տար, ո՞ւր է Աստուած: Մինչ դատարան կ'երթար, Լէսլի աղօթեց Աստուծոյ միջամտութեան համար: Յետոյ, ինքնաշարժին ձայնասփռուէն երգ մը լսեց, որուն բառերը կ'ըսէին.— «Աստուած Հոս է, թող կոտրած սիրտեր ուրախ ըլլան»: Արդեօ՞ք ատիկա երաշխիք մըն էր, թէ Աստուած լսած էր իր աղօթքը: Դատարանի սրահէն ներս Լէսլի լսեց դատաւորին վճիռը եւ ստորագրեց օրինաւոր թուղթերը, սակայն, տակաւին կը խորհէր, թէ պատասխան մը չէր ստացած Աստուծմէ: Երբ դատարանէն դուրս ելաւ, պզտիկ բեռնակառք մը եկաւ եւ կեցաւ իր մօտ: Վարիչը դուրս գալով ըսաւ.— «Ներողութիւն տիկին, ես ձեր վկայութիւնը լսեցի դատարանին մէջ: Կը հաւատամ, որ Աստուած կ'ուզէ որ ես քեզի օգնեմ»: Եւ իսկապէս ալ օգնեց: Այդ մարդը, որ կը կոչուէր Կէրի, օգնեց որ տեղական եկեղեցիէն կին մը, որ իրաւասութիւն եւ կարելիութիւնը ունէր երկու կողմերուն մէջ մտնելու, վերատեսութեան ենթարկելով դատը, կարելի դարձուց որ Լէսլի եւ իր աղջիկները մնան իրենց տան մէջ:

Երբ մարդիկ հարցնեն, ո՞ւր է Աստուած, կարելի է պատասխանել.— «Ճիշդ Հոս է»: Աստուած Կէրիի նման հաւատացեալներ կը գործածէ, որոնք ուխտ ըրած են շարունակելու Յիսուսի սկսած գործը — բժշկել կոտրած սիրտ ունեցողները եւ անոնց վէրքերը փաթթել (Սաղմ. 147. 3):

Երբ ԶԱստուած կը սիրենք, չենք կրնար չծառայել մարդոց:

Զօրաւոր Հոսանք Մը

Կարդա՛
Ամովս 5. 21-27

Բայց իրաւունքը ջուրի
պէս թող հոսի, եւ
արդարութիւնը
մշտաճիւս վտակի պէս:
—Ամովս 5. 24

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Թուոց 28-30

■ Մարկոս 8. 22-38

Ամովս մարգարէն գործածած է փոխաբերութիւնը գետի Հոսանքի մը, բացատրելու Համար արդարութեան յեղաշրջող զօրութիւնը: Ակնարկելով Իսրայէլի կրօնական մեռած ծեսերուն եւ անոնց միջոցով ժողովուրդը շահագործելուն (Ամովս 2 6-8, 5 21-27), մարգարէն կոչ կ'ընէ, որ իրաւունքն ու արդարութիւնը տիրապետող դառնայ ամէն պարագայի տակ: Ան նկատած էր, որ Աստուծոյ ժողովուրդը կառչած էր անարդարութեան նեխած լիճին, երբ պէտք էր, որ գործադրէին «մշտաճիւս վտակի մը պէս Հոսող արդարութիւնը», իրենց կեանքին մէջ:

Նոյնպէս, Աստուած կը փափաքի, որ մենք թոյլ տանք, որ արդարութիւնը «Հոսի ջուրի պէս», մեր կեանքի ընթացքին: Եւ այդ մէկը կարենալ իրագործելու Համար, պէտք է Հաստատել արդար օրէնքներ եւ սիրոյ Հոգածութիւն եւ օգնութիւն Հասցնել կարօտ եղողներուն:

Պէտք է բոլորս ալ արդարութիւնը սիրող եւ փնտռողներ ըլլանք, որպէսզի մաս կազմենք Աստուծոյ զօրաւոր արդարութեան Հոսանքին, մինչեւ Յիսուսի վերադարձը:

Արդարութիւնը կը հետեւի երբ ճշմարտութիւնը գործի կը վերածուի:

Երբ պատանի էի, Հօրս, Հօրեղբօրս եւ զարմիկներուս Հետ օր մը գացինք Գալիֆորնիայի Մէքրէմէնթօ գետը ձուկ որսալու: Գետին ափը հալած ձիւնի ջուրով լեցուած էր եւ անոր Համար Հոսանքը զօրաւոր էր, ջուրը մաքուր եւ շատ պաղ: Զարմիկներս եւ ես, դժուար կը տոկայինք կոխելու պաղ ջուրին մէջ՝ մեր կարթով Հմայելու ձուկերը: Տուն վերադարձին կեցանք լճակի մը քով, որ շատ մեծ տարբերութիւն ունէր գետին Հետ բաղդատած: Լճակին ջուրը տաք էր, եւ նեխած կը Հոսէր: Ճիշդ Հակառակը արագընթաց վազող մաքուր գետի Հոսանքին:

Ամովս մարգարէն գործածած է

Ի՞նչ Բան Երջան- կութիւն Կը Բերէ

Կարդա՛
Ժողովողի 2. 1-11

Ահա ամէն ինչ ունայ-
նութիւն ու հոգիի տան-
ջանք էր, եւ արեւի տակ
ոչ մէկ օգուտ կար:
— Ժողովողի 2. 11

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Թուոց 31-33

■ Մարկոս 9. 1-29

լոյսին տակ: Ան իսկապէս հարուստ մէկն էր (Ժող. 2.8):
ան բոլոր հաճոյքի միջոցները ունեցած էր այս աշխարհի
վրայ եւ զանոնք բոլորն ալ փորձած էր: Ինքզինք
բոլորովին հաճոյքին տուած (Հ. 1-3), հաճոյքի վայրեր եւ
միջոցներ ստեղծած եւ կառուցանած (Հ. 4-8), դրամական
ճոխութիւն դիզած (Հ. 8), եւ ծանր աշխատանք եւ սրտի
բոլոր փափաքները իրագործած (Հ. 10-11): Սակայն, այդ
բոլորէն ետք, Ժողովողի գիրքին հեղինակը կ'եզրակացնէ
ըսելով. — «Ահա ամէն ինչ ունայնութիւն եւ հոգիի
տանջանք էր, եւ արեւի տակ ոչ մէկ օգուտ կար» (Հ. 11):

Մշտատեւ գոհունակութիւնը չի գար դրամական կամ
ստացուածքի հարստութեան ճամբով՝ այլ մեր Փրկիչ
Յիսուս Գրիստոսէ: Հոգեւոր երգի մը հեղինակը կ'ըսէ. —
«Ես գտայ ուրախ ըլլալու միջոցը, ես գտայ տխրութենէ
ազատ ըլլալու դարմանը... Երբ գտայ Յիսուս՝ իմ Տէրս»:
Միայն ինքն է որ կրնայ տալ կատարեալ եւ մշտատեւ
երջանակութիւն (Յովհ. 15. 11):

Երջանկութիւն գտնելու համար գտի՛ր Գրիստոսը:

Տնտեսագէտ Ռիչըրտ Իսթէրլին,
քննելէ ենք յետ Համաշխարհային
Բ. պատերազմի ճաբոնի տնտեսական
յաջող իրագործումները, կ'եզրակա-
ցնէ, թէ դրամական յաջողութիւններ
միշտ ալ չեն բերեր հոգեկան գոհու-
նակութիւն: Վերջերս ուրիշ երկու
տնտեսագէտներ, սերտողութիւն մը
կը կատարեն աւելի քան հարիւր եր-
կիրներու մէջ եւ այն եզրակացու-
թեան կու գան, թէ կեանքի գոհու-
նակութիւնը աւելի բարձր է՝ աւելի
հարուստ երկիրներու մէջ:

Հարց է, թէ վերը յիշուած երկու
սերտողութիւններուն ո՞րն է շիտա-
կը: Փորձենք քննել զանոնք Ժողո-
վողի գիրքի հեղինակին տեսակէտին

Շիտակ Տեղեկութիւնը

Կարդա՛
Ա. Թեաղ. 4. 12-17

Եղբայրներ՛ր, չենք ուզեր որ անգէտ ըլլաք ցնջեցեալներուն մասին, որպէսզի չտրտմիք ինչպէս ուրիշները, որ յոյս չունին:

—Ա. Թեաղ. 4. 12

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

■ Թուոց 34-36

■ Մարկոս 9. 30-50

Մէջ խումբ մը հաւատացեալներ, կը վախնային, թէ իրենց հաւատացեալ սիրելիները, որոնք մեռած էին, կորսուած պիտի ըլլային յաւիտեանապէս՝ Յիսուսի երկրորդ գալստեան ժամանակ: Ատոր համար Առաքեալը գրեց իրենց ըսելով.— «Եղբայրներ, չենք ուզեր որ անգէտ ըլլաք ննջեցեալներուն մասին, որպէսզի չտրտմիք ինչպէս ուրիշները, որ յոյս չունին» (Ա. Թեա. 4. 12): Առաքեալին միտիթարող խօսքերը մեղմացուցած էր անոնց վախերը, տալով իրենց շիտակ տեղեկութիւն ննջեցեալներու մասին, եւ մեծ տարբերութիւն բերած էր կեանքին մէջ: Այդ տեղեկութիւններէն ետք, թէեւ կ'ողբային իրենց մեռելները, սակայն միեւնոյն ատեն կը շարունակէին ապրիլ օր մը զիրար տեսնելու յոյսով: Վերստին իրարու պիտի միանային բոլոր անոնք, որոնք Քրիստոսի հաւատալով ապրած էին իրենց կեանքը: Սիրելիներ կորսնցնելու ժամանակ, մենք ալ կրնանք միտիթարութիւն գտնել եւ յոյսով ապրիլ, որովհետեւ Աստուածաշունչը մեզի շիտակ տեղեկութիւն տուած է:

Մահը վերջակէտ մը չէ, այլ անիկա միայն պարզ ստորակէտ մըն է:

Օղը բարձրանալէ հազիւ 15 վայրկեան ետք, օդաչուն յայտարարեց, թէ օդանաւը լուրջ հարց մը ունէր եւ կազմին պատասխանատուները կը ջանային հարցը լուծել: Մի քանի վայրկեան ետք, ուրիշ յայտարարութիւն մը ըսաւ, թէ եղածը թրթռացում մըն էր, եւ անոր համար պէտք էր ետ օդակայան վերադառնալ: Ապա յաջորդաբար ծանուցումներ եղան, բացատրելու, թէ ինչ կը պատահեր եւ ի՞նչ կրնար պատահիլ երբ գետին իջնէինք: Մենք խուճապի չմատնուեցանք, որովհետեւ մեզի շիտակ տեղեկութիւններ տրուեցան ճիշդ ժամանակին:

Առաջին դարուն, Թեաղոսիկէի

Բարի՞ է...

Կարդա՛
Փիլիպպեցիս 4. 4-7

Եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն մտքէ վեր է, պիտի պահպանէ ձեր սիրտերն ու մտածումները՝ Յիսուս Քրիստոսով:
—Փիլիպպեցիս 4. 7

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Բ. Օրինաց 1-2
- Մարկոս 10. 1-31

Ինչպէ՞ս կրնար Հարցը «բարի» նկատուիլ Սփէֆըրտի Համար այդքան ծանր վիշտէ մը ետք: Երգին բառերը կ'ըսէին.— «Երբ խաղաղութիւն իբրեւ գետ կը յորդէ, կամ ցաւք իբր ալիք Հողմահոյզ...»: Առաքեալը կ'ըսէ Փիլիպպեցի 4-րդ գլխուն մէջ, թէ այդ խաղաղութիւնը կարելի է գտնել երբ աղօթքով եւ թախանձանքով մեր խնդրանքները կը ներկայացնենք Աստուծոյ (Կ. 6): Վստահութեամբ եւ հաւատքով եղած աղօթքով, մեր սիրտերուն բեռը թեթեւացած կ'ըլլանք եւ կրնանք ձեռքազատուիլ մեր վրայ ճնշող մտահոգութիւններէն եւ վիշտէն: Եւ կրնանք ունենալ «Աստուծոյ խաղաղութիւնը» (Կ. 7) – անբացատրելի երկնային Հոգեւոր անդորրութիւն մը:

Նման խաղաղութիւն մը կը գերազանցէ մեր ըմբռնողութիւնն ու պայմանները (Կ. 7) եւ կը պահպանէ մեր սիրտերը Յիսուս Քրիստոսով, եւ միեւնոյն ատեն կարելի կը դարձնէ, որ մենք ալ կարենանք երգել, նոյնիսկ մեր ցաւին մէջ.— «Այս նաեւ բարի է իմ Հողմոյս»:

Յիսուս երբեք չի սխալիր:

Մինչ երգչախումբը կը պատրաստուէր երգել «Բարի է իմ Հողմոյս» Հոգեւոր երգը, աշակերտ մը բարձրախօսին մօտեցաւ եւ պատմեց երգին ծնունդ տուող պատմութիւնը: Ան ըսաւ, թէ Սփէֆըրտ գրած էր այդ երգը նաև ու մը մէջ, որ կը մօտենար ծովուն մէջ այն կէտին, ուր անհետացած էին իր չորս աղջիկները:

Երբ լսեցի նախաբանը եւ պատանիներուն երգած երգին բառերը, զգացումներու ալիք մը վրաս խուժեց: Որքան դժուար էր ինձի Համար ըմբռնել Սփէֆըրտի հաւատքի խօսքերը: Ես որ մէկ աղջիկ գաւակ կորսնցուցած եմ, չորս հատ կորսնցնելը անչափելի եւ խոր վիշտ նկատեցի:

Աստուծոյ Օգնականները

Կարդա՛
Սաղմոս 103. 19-22

Օրհնարանցեք Տէրը
դուք՝ Անոր
հրեշտակները:
—Սաղմոս 103. 20

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Բ. Օրինաց 3-4
- Մարկոս 10. 32-52

Թէ բարի մարդիկ երբ մեռնին Հրեշտակներու կը վերածուին: Սակայն, Աստուծոյ Խօսքը, որ բարձրագոյն Հեղինակութիւնն ու վաւերականութիւնը ունի, ուրիշ բան կ'ուսուցանէ մեզի Հրեշտակներու մասին: Հոն կ'ըսուի—

— Աստուած ստեղծեց Հրեշտակները (Կող. 1. 15-17):

— Հրեշտակները կը փառաբանեն զԱստուած (Նէեմ. 9. 6): Անոնք ճանչցուած են նաեւ Միքայէլ (Յուդայ 1. 9), Քերովբէ (Դ. Թագ. 19. 15) եւ Սերովբէ (Յայտի 6. 1-3) անուններով:

— Անոնք կը ծառայեն Աստուծոյ ժողովուրդին (Եբր. 1. 13-14), հսկելով եւ պաշտպանելով զանոնք (Սաղմ. 91. 9-12):

— Անոնց յատուկ պարտականութիւն տրուած է Աստուծոյ կողմէ (Մատթ. 1. 20, Ղուկ. 1. 26):

— Անոնք կ'ուրախանան, երբ կ'ապաշխարենք եւ Քրիստոսը կ'ընդունինք որպէս մեր Փրկիչը (Ղուկ. 15. 7, 10):

Միայն Աստուած արժանի է մեր փառաբանութեան: Միանանք Հրեշտակներու փառաբանութեան երգին:

Հրեշտակները Աստուծոյ յատուկ օգնականներն են:

Խումբ մը մանուկներու Հետ կը խօսէի Աստուծոյ եւ գերբնական Հերոսներու մասին, երբ անոնցմէ մէկը՝ Հինգ տարեկան, Հարցուց— «Աստուած բարեկամներ ունի՞, ինչպէս Հերակլէս ունի»: Իր 7 տարեկան եղբայրը անմիջապէս պատասխանեց— «Անշուշտ: Հազարներով ունի: Անոնք իր Հրեշտակներն են»:

Հրեշտակներ յաճախ ժողովուրդներու խօսակցութեան նիւթ դարձած են, եւ շատ մը առասպելական գրոյցներ կան անոնց մասին: Օրինակ, կան կարգ մը մարդիկ, որոնք կ'աղօթեն Հրեշտակներուն, խորհելով թէ անոնք Հաւասար են Աստուծոյ: Ուրիշներ կան, որոնք կը Հաւատան,

երբ մեռնին Հրեշտակներու կը վերածուին: Սակայն, Աստուծոյ Խօսքը, որ բարձրագոյն Հեղինակութիւնն ու վաւերականութիւնը ունի, ուրիշ բան կ'ուսուցանէ մեզի Հրեշտակներու մասին: Հոն կ'ըսուի—

— Աստուած ստեղծեց Հրեշտակները (Կող. 1. 15-17):

— Հրեշտակները կը փառաբանեն զԱստուած (Նէեմ. 9. 6): Անոնք ճանչցուած են նաեւ Միքայէլ (Յուդայ 1. 9), Քերովբէ (Դ. Թագ. 19. 15) եւ Սերովբէ (Յայտի 6. 1-3) անուններով:

— Անոնք կը ծառայեն Աստուծոյ ժողովուրդին (Եբր. 1. 13-14), հսկելով եւ պաշտպանելով զանոնք (Սաղմ. 91. 9-12):

— Անոնց յատուկ պարտականութիւն տրուած է Աստուծոյ կողմէ (Մատթ. 1. 20, Ղուկ. 1. 26):

— Անոնք կ'ուրախանան, երբ կ'ապաշխարենք եւ Քրիստոսը կ'ընդունինք որպէս մեր Փրկիչը (Ղուկ. 15. 7, 10):

Միայն Աստուած արժանի է մեր փառաբանութեան: Միանանք Հրեշտակներու փառաբանութեան երգին:

Հրեշտակները Աստուծոյ յատուկ օգնականներն են:

Փրկութեան Հասնիլ

Կարդա՛
Ղուկաս 15. 1-7

...Աւելի ուրախութիւն
պիտի ըլլայ երկինքը մէկ
մեղաւորի համար՝ որ
կ'ապաշխարէ, քան ին-
ցիսուցինը արդարներու
համար՝ որոնց ապաշ-
խարութիւն պէտք չէ:
—Ղուկաս 15. 7

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ
ՏԱՐՈՒՆ ՄԷՁ

■ Բ. Օրինաց 5-7

■ Մարկոս 11. 1-18

տէն անցնող մարդ մը նկատելով տղուն ըրածը, կը հարցնէ.— «Ի՞նչ կ'ընես»: «Կ'ազատեմ այս ձուկերուն կեանքը» կը պատասխանէ պատանին: «Մոռցի՛ր ատոնք: Անկարելի է այդ բոլոր ձուկերը փրկել» կ'ըսէ մարդը: «Շիտակ ես» կ'ըսէ պատանին, «Սակայն շատ մեծ գործ մը ըրած կ'ըլլամ իւրաքանչիւր այն ձուկին համար որ կը փրկեմ»:

Ես շատ կը սիրեմ այդ պատանիին տեսակէտը: Երբ մեղքի ալիքները մեզ ցամաք կը նետէին մեռնելու համար, Աստուած զրկեց Իր Որդին, որպէսզի քալէ ծովեզերքի վրայ եւ փրկէ բոլոր անոնք, որոնք կ'ապաշխարեն: Եւ ինչպէս Յիսուս ըսաւ, «Այսպէս աւելի ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի համար՝ որ կ'ապաշխարէ, քան իննիսունները արդարներու համար՝ որոնց ապաշխարութիւն պէտք չէ» (Ղուկ. 15. 7):

Երկինքը ուրախացա՞ծ է արդեօք քու փրկութեամբդ: Եթէ այդպէս է, միացիր այն խումբին, որոնք կ'աշխատին կորսուած հոգիներու փրկութեան համար:

Երբ դուն փրկուած ես, պիտի ուզես փրկել նաև ուրիշները:

Մարտի եւ ես վերջերս այցելեցինք Կարգ մը երկիրներու կարեւոր քաղաքները: Խորապէս ազդուեցանք եւ ցաւ զգացինք այն միլիոնաւոր մարդոց համար, որոնք երբեք չեն լսած Յիսուսի փրկութեան շնորհքին մասին: Զգացինք նաեւ, թէ Քրիստոսը աշխարհին ծանօթացնելը որքա՞ն մեծ կարիք մըն է:

Յիշեցի պատանիի մը պատմութիւնը, որ երբ կը քալէր ծովեզերքի վրայ, կը նկատէ հարիւրաւոր աստղածուկեր, որոնք ալիքներուն պատճառաւ ցամաք նետուած՝ տաք արեւին տակ մեռնելու ենթարկուած էին: Պատանին մէկ առ մէկ կը բռնէր ձուկերը եւ ետ ծով կը նետէր: Մօ-

Երբ դուն փրկուած ես, պիտի ուզես փրկել նաև ուրիշները:

Մի՛ Մոռնար

Կարդա՛
Բ. Օր. 8. 1-2, 10-18

Զգուշացի՛ր որ Տէրը,
քու Աստուածդ,
չմոռնաս՝ չպահելով
Անոր պատուիրանները:
— Բ. Օրինաց 8. 11

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐԻ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Բ. Օրինաց 8-10
- Մարկոս 11. 19-33

8. 2), նաեւ «Զգուշացի՛ր որ Տէրը՝ քու Աստուածդ, չմոռնաս՝ չպահելով Անոր պատուիրանները» (Բ. Օր. 8. 11):

ԶԱստուած մոռնալը կրնայ յայտնուիլ Փորձելէ (Հ. 2-4): Աստուած թոյլ տուաւ որ իր ժողովուրդը անօթենար եւ յետոյ մանանայով կերակրեց զանոնք: Երբ կեանքի անմիջական կարիքներուն կարօտինք, դիւրին է մտածել, թէ Աստուած մեզ մոռցած է: Գոհացումէ (Հ. 10-11): Առատութիւն կամ կարօտութիւն կրնան պատճառ դառնալ հոգեւոր յիշողութեան կորուստին, որովհետեւ երկու պարագային ալ մարդիկ իրենց ուշադրութիւնը կը կեդրոնացնեն իրենք իրենց վրայ, եւ ոչ թէ Աստուծոյ, որ ամէն բան կը հայթայթէ: Հպարտութենէ (Հ. 12-16): Երբ առատութիւնը մարդոց զգալ տայ հպարտութիւն, թէ իրենք շահեցան իրենց ունեցածը, զԱստուած կը մոռնան:

Հեզութիւն, հնազանդութիւն եւ փառաբանութիւն, կ'օգնեն մեզի յիշելու Աստուծոյ հաւատարիմ հոգածութիւնը: Շորհակալ ըլլանք իրեն այսօր, իր բոլոր ըրածներուն համար:

Թոյլ մի տար, որ Աստուծոյ շնորհֆներուն
առատութիւնը մոռցնել տայ քեզի տուողը:

Իմ նախասիրած ծաղրանկարս
Գերմարդը իր Վերջին Տարինե-
րունն է, ուր տարեց պողպատէ մարդ
մը, թառած պատուհանի մը ձողին՝
պատրաստ ցատկելու, ետեւ նայելով
կ'ըսէ.- «Հիմա ո՞ւր կ'երթայի ես»:

Մոռացութիւնը կրնայ պատա-
հիլ բոլորիս: Պատահական մոռացում-
ներ կրնան երբեմն հաճելի կամ նե-
ղացուցիչ թուիլ, զԱստուած յիշել
մոռնալը կրնայ աղետալի ըլլալ:

Իսրայէլի ժողովուրդը երբ կը
մտնէր խոտացուած երկիրը, Մովսէս
կոչ ըրաւ անոնց.- «Յիշէ՛ այն ամբողջ
ճամբան, որ Տէրը՝ քու Աստուածդ,
այս քառասուն տարիները անապա-
տին մէջ քեզի քալել տուաւ» (Բ. Օր.

Յուշարարներ

Կարդա՛
Բ. Պետրոս 1. 5-15

Ուստի երբեք անհոգ
պիտի չըլլամ, միշտ
յիշեցնելու ձեզի այս
բաները:
—Բ. Պետրոս 1. 12

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Բ. Օրինաց 11-13
- Մարկոս 12. 1-27

էր օգը այդ օր, ինչ կերաւ, հեռատեսիլի վրայ ինչ դիտեց եւ որոնց հետ խօսեցաւ:

Մեզմէ քիչեր նման յիշողութիւն մը ունին: Ասոր համար պէտք ունինք յուշարարներու, մեր աւօրեայ պարզ ժամադրութիւններն ու ընելիք գործերը ընելու: Այս հարցը իրողութիւն է մանաւանդ հոգեւոր գործերու պարագային: Պետրոս Առաքեալ կ'ակնարկէ, թէ կարիքը կայ հոգեւոր բաներու յուշարարներու, երբ կ'ըսէ. — «Ուստի երբեք անհոգ պիտի չըլլամ, միշտ յիշեցնելու ձեզի այս բաները...» Այո՛, ես կը խորհիմ շիտակ է... անհանգիստ ընել մեզի յիշեցնելով... «ուստի պիտի ջանամ, որ միշտ յիշէք այս բաները, այս աշխարհէն մեկնելէս ետք» (Բ. Պետ. 1. 12-15):

Հոգ չէ թէ ինչ տեսակի յիշողութիւն ունինք, պէտք ունինք աստուածաշնչական սկզբունքներու յուշարարի մը: Աւօրեայ Սուրբ Գիրքի ընթերցում, սերտողութեան պահեր, եկեղեցիի գործունէութեանց մասնակցութիւն, կրնան օգնել մեզի յիշելու Աստուծոյ կենարար ճշմարտութիւնները:

Թող Աստուծոյ Խօսքը լեցնէ մեր յիշողութիւնը, կառավարէ մեր սիրտը եւ առաջնողէ մեր քայլերը:

Ճիլ Փրայս այնքան արտակարգ յիշողութիւն ունէր, որ զարմանք կը պատճառէր գիտնականներուն: 2006-ին, իր չափէն աւելի բարձր յիշողութիւնը գիտական թերթի մը նիւթ դարձաւ Արտակարգ Ինքնակենսագրական Յիշողութեան Մը Պարագան խորագրով յօդուածի մը մէջ: Փրայս յատուկ բնատուր ուշիմութիւն մը չունի յիշելու համար բառերու ցանկեր, թիւեր, իրողութիւններ կամ լեզուներ: Բայց ան շատ յստակօրէն կը յիշէ, թէ ինչ պատահած էր իրեն վերջին 30 տարիներուն ընթացքին: Երբ մէկը թուական մը ըսէ, կրնար յիշել, թէ շաբթուայ որ օրն էր այդ, ինչպէս

Աստուծոյ Կարեկցութիւնը

Կարդա՛
Ծննդոց 32. 3-13

Արժանի չեմ այն բոլոր
կարեկցութիւններուն:
—ԾՆՆԳ 32. 10

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԱԷԿ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Բ. Օրինաց 14-16

■ Մարկոս 12. 28-44

րէն բառէ մը առնուած է, որ կը նշանակէ Աստուծոյ մշատեւ սէրը: Կարեւոր է, որ այս խօսքը անկեղծօրէն մարդու մը սրտէն բխի եւ ինքզինք բոլորովին անարժան կատէ Աստուծոյ կարեկցութեան: Վստահելով ամբողջութեամբ Աստուծոյ հաւատարիմ սիրոյն, Յակոբ կ'աղերսէ ըսելով.— «Ազատէ՛ գիս... Արժանի չեմ» (Հ. 10-11): Յակոբ գիտեր իր գործած մեղքին ահաւորութիւնը եւ իր ներումի արժանի չըլլալը, սակայն ան տակաւին կը դիմէ Աստուծոյ անսահման կարեկցութեան, քանի որ ուրիշ միջոց չի տեսներ փրկութեան: Ան շատ լաւ գիտեր, թէ ինք արժանի չէր Աստուծոյ շնորհքին: Սակայն Յակոբ իր յոյսը դրած չէր իր արժանի ըլլալուն վրայ, այլ Աստուծոյ գութին եւ խոստումին: Աստուած յոռախաբ չընէր բոլոր անոնք, որոնք դարձի գալով եւ զղջումով իր կարեկցութեան կը դիմեն: Ինչպէս Աստուած լսեց Յակոբի աղերսանքը, նոյնպէս պիտի լսէ մեր աղերսանքը երբ հեզութեամբ եւ զղջումով կը դիմենք իր կարեկցութեան:

Կարեկցութիւնը չշահուած օրհնութիւն մըն է, որ կը շնորհուի Աստուծոյ կողմէ անարժան ստացողի մը:

Նուազագոյնէն պակաս արժանի Աստուծոյ բոլոր կարեկցութեանց: Այս էր նշանաբանը 17-րդ դարու Անգլիացի բանաստեղծ եւ կղերական ձորճ Հըրպըրթի: Այդ խօսքը փորագրուած էր նաեւ իր մատանիին վրայ, եւ այդ խօսքով ան կը ստորագրէր իր նամակներն ու գիրքերը: Յակոբ արտասանեց նման խօսքեր երբ կը մտածէր Աստուծոյ բարութեան մասին, հակառակ իր մեղքին եւ ամօթալի արարքներուն: Ան կ'ըսէ.— «Ես արժանի չեմ այն բոլոր կարեկցութիւններուն եւ ամբողջ ճշմարտութեան, որոնցմով դուն ծառայիդ հետ վարուեցաւ» (ԾՆՆԳ. 32. 10):

«Կարեկցութիւն» բառը Եբրայե-

Միացեալ Նպատակ

Կարդա՛
Ա. Կորնթ. 1. 10-17

Կ'աղաչեմ ձեզի եղբայր-
ներ, մեր Տէրոջ՝ Յիսուս
Քրիստոսի անունով, որ
դուք բոլորդ ունենաք
նոյն խօսքը, ու
պառակտումներ չըլլան
ձեր մէջ:

—Ա. Կորնթ. 1. 10

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Բ. Օրինաց 17-19

■ Մարկոս 13. 1-20

ները յաճախ կու գան ոչ թէ դուրսէն, այլ եկեղեցիի միւս
հաւատացեալներէն: Նման բան մը պատահած էր Կորնթոսի
եկեղեցիին մէջ: Անոր համար Առաքեալը իր նամակին
մէջ նիւթ կը դարձնէ այդ անջատողական ոգին որ սկսած
էր աճիլ այդ եկեղեցիին մէջ: Առաքեալը իր հովուական
փորձառութեամբ՝ կը քաջալերէ Կորնթացիներու եկեղեցիի
հաւատացեալները, որ համաձայնին կարեւոր եւ հիմնական
հարցերու շուրջ եւ բաժանում չստեղծեն ոչ կարեւոր
հարցերու պատճառաւ: Եկեղեցիի ժողովուրդը կը վիճէին
իրենք զիրենք տարբեր առաջնորդներու հետեւողներ ընե-
լով: Ոմանք իրենք զիրենք կը կոչէին Պողոսի հետեւորդներ,
ուրիշներ Ապօղոսի, աւելի ուրիշներ Պետրոսի եւ նոյնիսկ
Քրիստոսի: Այդպէս ընելով անոնք աւելի կ'արժեւորէին
իրենց նախասիրած առաջնորդը քան Քրիստոս: Պողոս
Առաքեալ կը պատուիրէ, թէ եկեղեցին միաբան պահողը
անոր Աւետարանը քարոզելու նպատակը պէտք է ըլլայ:
Նոյնն է պարագան նաեւ այսօր, մեզի համար ալ:

Միաբան եկեղեցի մը զօրաւոր եկեղեցի մըն է:

Ապահով Ձոյգ Մը Ձեռքեր

Կարդա՛
Սաղմոս 138

Քու աջ ձեռքդ զիս
պիտի փրկէ:
—Սաղմոս 138. 7

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Բ. Օրինաց 20-22
- Մարկոս 13. 21-37

զոյգ ձեռքերուն մէջ: Ան այդ մասին կ'արտայայտուի եւ կ'ըսէ.— «Դուն քու ձեռքդ պիտի երկարես... եւ քու աջ ձեռքդ զիս պիտի փրկէ» (Սաղմ. 138. 7): Դաւիթի պէս մենք ալ կրնանք դիմել Աստուծոյ ապահով ձեռքերուն, պահելու համար մեզ հոգեւոր վտանգէ եւ պարտութենէ:

Ուրիշ ապահովութիւն Աստուծոյ խօսքէն, բոլոր անոնց՝ որոնք Յիսուսի կը հետեւին.— «Անոր որ կարող է զերծ պահել ձեզ անկումէ, եւ անարատ կեցնել իր փառքին առջեւ՝ ցնծութեամբ, մեր Փրկիչին՝ Միակ Աստուծոյ, (մեր Տէր Յիսուսի ձեռքով), փառք ու մեծափառութիւն (բոլոր դարերէ առաջ) հիմա ու բոլոր դարերու մէջ: Ամէն» (Յուդա 1. 24-25): Սյդ չի նշանակեր, թէ մենք բնաւ անկում պիտի չունենանք: Այլ այդ կը նշանակէ, թէ մենք այնքան ծանր անկում մը պիտի չունենանք, որ Աստուած չկարենայ մեզ կրկին վեր կանգնեցնել:

Աստուծոյ ապահովութեան զոյգ ձեռքերը երբեք չեն ձախողիր մեզ ապահով բռնել միշտ, երբ իրեն վստահինք:

Ոչ մէկ տեղ այնքան ապահով է՝ որքան Աստուծոյ
ձեռքերուն մէջ ըլլալը:

Է տվին վէն Տըր Սար՝ Անգլիոյ Մէնչէսթըրը քաղաքի Ֆուլթոլի Միացեալ Խումբի բերդապահը, զոյգ մը «ապահով» ձեռքեր ունի: Ան իր խումբին բերդը կրցաւ ապահով պահել 1302 վայրկեաններ, մէկ եղանակի ընթացքին եւ կտրեց աշխարհի մրցանիշը: Այդ կը նշանակէ, թէ էտվին կրցաւ մօտաւորապէս 15 խաղեր խաղալ՝ իւրաքանչիւրը 90 վայրկեան, եւ իր խումբին բերդը ապահով պահեց: Սակայն, Մարտ 2009-ին հակառակորդ խումբէն արձակուած կոլ մը, վերջ դրաւ իր մրցանիշին:

Սաղմոսերգու Դաւիթ մխիթարութիւն գտաւ Աստուծոյ ապահով

րութիւն գտաւ Աստուծոյ ապահով

րութիւն գտաւ Աստուծոյ ապահով

րութիւն գտաւ Աստուծոյ ապահով

րութիւն գտաւ Աստուծոյ ապահով

րութիւն գտաւ Աստուծոյ ապահով

Յատուկ Առանձնաշնորհումներ

Կարդա՛
Հոովմ. 8. 12-17

Նախասահմանեց մեզ
Իր որդեգրութեան՝
Յիսուս Քրիստոսի
միջոցաւ:
—Եփեսացիս 1. 5

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ
ՏՄՈՒՆ ՄԷՉ

- Բ. Օրինաց 23-25
- Մարկոս 14. 1-26

Թէ, երբ Միացեալ Նահանգներու մէջ ռազմանաւ մը մէկու մը անուը կը կրէ, ան կը նկատուի այդ անուը կրող մարդուն նաւը: Ուրեմն որպէս ռազմանաւին անուը կրող մարդուն զաւակը, Կրտսեր Ճան կրնար յատուկ առանձնաշնորհումներ ունենալ նաւուն վրայ:

Այս պարագան մեզի կը բացատրէ շատ կենսական հոգեւոր սկզբունք մը: Որպէս որդեգրուած զաւակներ Աստուծոյ մեծ ընտանիքին, մեզմէ բոլոր անոնք, որոնք հաւատալով փրկութիւն գտած են, ունին զաւակի իրաւասութիւններ: Առաքեալը կ'ըսէ, թէ որպէս հաւատացեալներ, Աստուած «մեզ նախասահմանեց իր որդեգրութեան՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (Եփես. 1. 5): Մեր կեանքի ճամբորդութեան այդ կոչի ընթացքին, կրնանք քաջութեամբ դիմագրաւել ամէն դժուարութիւն, քանի որ մեր «Աբբա Հայրը» (Հոովմ. 8. 15) Տէրն է նաւուն, եւ մեզի հետ կը բաժնեկցի ամէն բան: Փառք Տէրոջ, մենք ժառանգորդներ ենք Քրիստոսի հետ միասին:

Հաւատացեալի մը ժառանգութիւնը ապահովուած է յաւիտենապէս:

Պիլի Նունան, իր Միշտ երիտասարդ-Բարեկամութիւնն Կրտսեր Ճան Ֆ. Քէնէտիի հետ գիրքին մէջ, կը յիշէ Նախագահ Ճան Քէնէտիի որդւոյն հետ ունեցած իր կեանքի փորձառութիւնները: Պիլի կը պատմէ, թէ 1980-ին, ինք եւ Կրտսեր Ճան կը հրաւիրուին Ճան Ֆ. Քէնէտի անունը կրող օդանաւակիր ռազմանաւը այցելութեան: Երբ առաջնորդ մը կը պտըտցնէր զիրենք նաւուն վրայ, ակամայ կը մտնեն արգիլուած վայր մը: Հոն գտնուող սպան երբ կը կեցնէ զիրենք, առաջնորդը ցոյց տալով ձանը կ'ըսէ.- «Ասիկա իր հօր նաւն է»: Ակնարկը ուղղելով ձանին, սպան կը բացատրէ իրենց

Վերջին Պաշտպանութեան Գիծը

Կարդա՛
Հոովմ. 8. 31-39

Այս բոլոր բաներուն մէջ
ալ աւելի յաղթող
կ'ըլլանք Անով որ սիրեց
մեզ:
—Հոովմ. 8. 37

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐԻ ՄԷԿ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Բ. Օրինաց 26-27
- Մարկոս 14. 27-53

Փ ենաիլէնիայի Կէթիապըրկ շրջանին մէջ տեղի ունեցող պատերազմը փոխած է Ամերիկայի քաղաքացիական պատերազմի ընթացքը: Բախումին կիզակէտերէն մէկը ժայռոտ բլուր մըն էր, ուր հազարապետ ճաշուա Լորընս Չէմպըրլէյն իր հետեակազօրքով դիրք բռնած էր: Եթէ դաշնակից զօրքեր անցնէին Չէմպըրլէյնի մարդոց, կարգ մը պատմաբաններ կը հաւատան, թէ Միացեալ բանակը պիտի պաշարուէր, եւ հաւանաբար պիտի կորսնցնէր պատերազմը: Չէմպըրլէյնի 20րդ հետեակազօրքը պաշտպանութեան վերջին գիծն էր:

Յիսուսի հետեւորդներն ալ շատ կենսական պատերազմի մը մէջ են: Մինչ կը պայքարինք Սատանային հնարքներուն դէմ (Եփես. 6. 11), մենք կանչուած ենք հազնելու «Աստուծոյ զրահը» եւ հաստատ կենալու մեր պաշտպանութեան գիծին վրայ (Հ. 10-18):

Կէթիապըրկի զինուորներուն պէս, մենք ալ ունինք «վերջին պաշտպանութեան գիծ մը»: Մեզի համար թէեւ այդ պաշտպանութիւնը շատ աւելի մեծ է քան որեւէ մարդկային զօրութիւն, Հոովմ. 8. 31-39 հատուածին մէջ Առաքեալը կ'ըսէ, թէ մեր վերջնագոյն վստահութիւնը Քրիստոսի կենդանի սիրոյն վրայ է: Այդ սիրոյն պաշտպանութիւնը այնքան կատարեալ է, որ ոչ ոք կրնայ «զատել մեզ Աստուծոյ սէրէն, որ Քրիստոս Յիսուսով մեր Տէրոջմով է» (Հ. 39):

Երբ թշնամին յաղթական կը թուի ըլլալ եւ ամէն բան վտանգուած, պէտք չէ մոռնալ, թէ մենք ունինք անպարտելի վերջին պաշտպանողական գիծ մը, որուն միջոցով «Ալ աւելի յաղթող կ'ըլլանք անով, որ մեզ սիրեց» (Հ. 37):

Աստուծոյ ծրագիրը միշտ կը տանի յաղթանակի:

Իսկական Հերոսը

Կարդա՛
Յովհաննու 3. 22-30

Պէտք է որ Ան մեծնայ,
իսկ ես՝ պզտիկնամ:
—Յովհաննու 3. 30

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Բ. Օրինաց 28-29
- Մարկոս 14. 54-72

Ան կը հաւատար այն սկզբունքին, թէ հերոսի անունը պէտք էր իր ընկերութեան տրուէր եւ ոչ թէ իրեն:

Մենք միեւնոյն անձուրացութեան տիպարը կը տեսնենք զօրաւոր քարոզիչ Յովհաննէ Մկրտիչի կեանքին մէջ, որ իր առաքելութիւնը կը նկատէր միայն որպէս ճամբայ պատրաստող՝ գալիք Մեսիկային: Երբ Յովհաննէս Մկրտիչի հետեւողներ մտահոգուած իրեն յայտնեցին, թէ Յիսուս սկսած էր մկրտել մարդոց եւ ամբոխը կը հետեւէր իրեն, ան պատասխանեց.— «Դուք ձեզմէ կը վկայէք ինծի համար, թէ ըսի.— ”Ես Քրիստոսը չեմ, հապա ղրկուած եմ Անոր առջեւէն...”: Պէտք է որ Ան մեծնայ, իսկ ես պզտիկնամ» (Յովհ. 3. 28, 30):

Որպէս Յիսուսի հետեւորդներ, մենք ալ Ձինք կը մեծարե՞նք, թէ ոչ կը փնտռենք, որ մարդիկ մեզ յարգեն: Մեր բարձրագոյն նպատակը պէտք է Տէրը փառաբանել ըլլայ: Ինք է հերոսը: Ձինք մեծարելը մեծութեան նշան է:

Մեծ հաւատացեալը ան է, որ այնքան փոքր է, որ թոյլ կու տայ որ Աստուած մեծարուի իր կեանքին մէջ:

Լուի Պ. Նիւմիլըր ճանչցուած էր որպէս խոնարհ, անկեղծ եւ անձնուէր անձնաւորութիւն մը: Որպէս նախագահը Քէթրլփիլըր Թրաքթոր Ընկերութեան (1941-54), ան կրցաւ զօրացնել իր արտադրութիւնը Համաշխարհային Բ. պատերազմի պահանջներուն վրայ, գետին շարժող հսկայ եւ զօրաւոր Թրաքթորներ արտադրելով: «20րդ Դարու Մեծագոյն Առեւտրական Առաջնորդներ» գիրքին հեղինակը, կը նկարագրէ Նիւմիլըրը որպէս «Յաջողութիւն առանց փողերգութեան»: Կ'ըսուի թէ անոր մեծութեան նշանը իր ինքնութիւնը դարս պահելն էր իր առեւտրական գործէն:

Քարի Աստուած Մը

Կարդա՛
Սաղմոս 46

Տէրը տնանկից ալ
պատսպարան պիտի
ըլլայ, պատսպարան
տագնապի ժամանակ:
—Սաղմոս 9. 9

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Բ. Օրինաց 30-31
- Մարկոս 15. 1-25

արկածին մասին: Մարդը, որուն զարկած էր, մասնաւոր մնայուն վէրք մը չէր ունեցած: Ի՞նչ կրնար պատահիլ, եթէ իրենցմէ մէկը այդ արկածով մահանար: Ան խորհեցաւ, թէ Աստուած տակաւին նուազ բարի պիտի չըլլար:

Երբեմն, երբ դժբախտութեան մը փորձառութիւնը կ'ունենանք, հարց կ'ըլլայ մեզի, թէ արդեօք Աստուած տակաւին բարի՞ է: Արդեօք Ան մի՞շտ բարի է: Այո՛, Աստուած միշտ բարի է: Ան երբեք չի խոստանար որ գէշ բաներ բնաւ պիտի չպատահին մեզի: Բայց Ան կը խոստանայ «ապաւէն եւ զօրութիւն» ըլլալ (Սաղմ. 46. 1): Ան երբեք չի խոստանար մեզի չքայել մահուան շուքի ձորին մէջ: Բայց կը խոստանայ մեզ առանձին չձգել նման պարագաներու տակ (Սաղմ. 23. 4): Աստուած բարի է, հոգ չէ թէ ինչ տառապանքներ դիմադրաւենք: Եթէ նոյնիսկ չհասկնանք դժբախտութիւններու պատճառը, կրնանք ըսել «Ես տակաւին Տէրոջմով պիտի հրճուիմ, իմ փրկութեանս Աստուծով պիտի ուրախանամ (Ամբ. 3. 18):

**Աստուած կը փորձէ մեր հաւատքը, որպէսզի
վստահիմք իր հաւատարմութեան:**

Երբ քրոջս ամուսինը միախոնար էր Սալիի մէջ (Արեւմտեան Ափրիկէ), մեծ արկած մը ունեցաւ: Երբ իր հեծանիւով կը ճամբորդէր, յանկարծ մարդ մը, ճիշդ ճամբուն մէջտեղ իր առջեւ կ'ելլէ: Հեծանիւը կը զարնուի մարդուն եւ քերայրս հեծանիւով ճամբէն դուրս՝ աւելի քան 200 ոտք հեռուն կը գլորուի: Կարճ ժամանակ մը ետք հիւանդանոցին մէջ իր ինքնագիտակցութիւնը կը վերագտնէ: Բժիշկը կ'ըսէ, թէ ինք «իսկապէս բախտաւոր» էր մահուանէ փրկուելով: Քերայրս կը ժպտի եւ կը պատասխանէ.- «Աստուած բարի է»: Ետքը ան կը սկսի մտածել այն օրուայ

Ո՞վ ես դու

Կարդա՛
Մատթեոս 4. 18-25

Եկէք իմ ետեւէս ու
մարդոց որսորդ ընեն՝
ձեզի:
—Մատթեոս 4. 19

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Բ. Օրինաց 32-34
- Մարկոս 15. 26-47

մէական կայսրութեան տիրապետութեան շրջանին եւ իր կեանքը կ'առաջնորդուէր իր ազահութեամբ: Սակայն, ամէն բան փոխուեցաւ այն օրէն, երբ Յիսուսի հանդիպեցաւ եւ Ան Հրաւիրեց զինք, որ Իրեն հետեւի (Մատթ. 9. 9): Յանկարծ Մատթեոս բոլորովին նոր ինքնութիւն մը ունեցաւ որպէս Յիսուսի հետեւող մը: Եւ այդ փորձառութիւնը միայն ինք չէ որ ունեցաւ: Կը կարդանք ձկնորս մարդոց մասին Մատթ. 4. 18-25 հատուածին մէջ - Պետրոս, Անդրէաս, Յակոբոս եւ Յովհաննէս, որոնք ձգեցին իրենց ուրկանները եւ հետեւեցան Յիսուսի:

Յիսուս հիացում առթող անձ մըն է: Ան տակաւին Իրեն հետեւողներ կը փնտռէ եւ կ'ոզէ կեանքովդ բան մը ընել: Այդ չի նշանակեր զբաղումդ ձգել: Իրեն հետեւող ըլլալ կը նշանակէ ապրիլ Իր կամքին համեմատ եւ Իր ճամբուն մէջ քալելով կեանք մը: Ուրեմն, եթէ յաջորդ անգամ մէկը հարցնէ քեզի.- «Ո՞ն ես դու», յուսամ պատասխանդ պիտի ըլլայ «Ես Յիսուսի հետեւող մըն եմ»:

Եթէ մէկը քեզի հարցնէ, «Ո՞վ ես դու», կ'ենթադրեմ, թէ դուն քու մասիդ քիչ մը պատմելէ ետք, պիտի չմոռնաս յիշելու, թէ դուն ինչ գործ կ'ընես: Օրինակ.- «Ես Հիւլանդապահուհի եմ» կամ «Ես հաշուապահ եմ»: Բայց իսկութեան մէջ, դուն այդ քու ըսածդ չես, այլ դուն ի՞նչ կ'ընես: Եւ այդ մէկը մեզ կը տանի ուրիշ հարցումի մը, թէ ինչ գործ որ կ'ընես դուն ա՞յն ես, եւ կամ ո՞վ պիտի ըլլաս դուն երբ դադրիս այդ գործը ընելէ»:

Մեր ով ըլլալը կը բացատրուի մեր Գրիստոսի հետ ունեցած յարաբերութեամբ: Օրինակ Մատթեոսը: Ան հարկահաւաք մըն էր Հռով-

Եթէ դուն Յիսուսի հետեւող մըն ես, այդ է
ամբողջ ինճնութիւնը որուն պէտք ունիս:

Հարազատ Գեղեցկուծիւն

Կարդա՛
Առակաց 31. 21-31

Վայելչութիւնը կը խաբէ,
ու գեղեցկութիւնը
ունայն է, սակայն
Տէրոջմէն վախցող կիճը
պիտի գովուի:
—Առակաց 31. 30

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Յետև 1-3
- Մարկոս 16

բանի գեղեցկութիւնն չկայ: Ասիկա կրնայ տանիլ մեզ բախդատութեան եւ սոսկալի յուսախաբուութեան:

Տարիներ առաջ բարեկամներէս մէկը պատմեց ինծի անուշիկ եւ ինքնավստահ պարմանուհիի մը հետ իր ունեցած խօսակցութեան մասին: «Դուն շատ ինքնավստահ կ'երեւիս, կրնա՞ս ըսել ինչո՞ւ» կը հարցնէ բարեկամս: «Այո՞» կ'ըսէ աղջիկը: «Քանի որ շատ վայելուչ եմ»: «Ո՛հ, ներողութիւն» կ'ըսէ բարեկամս սրամտութեամբ: «Ինչո՞ւ ներողութիւն կ'ըսես» կը հարցնէ աղջիկը զարմացած: «Որովհետեւ կրնաս միշտ վայելուչ չըլլալ»:

«Վայելչութիւնը խաբուսիկ է ու գեղեցկութիւնը ունայն», կ'ըսէ իմաստուն առակագիրը (Առակ. 31) Մարմնական գեղեցկութիւնը՝ բոլորն ալ շուտով կը խամրին: Մարդոց զայն պահելու ամէն տեսակի ճիգեր դատապարտուած են ձախողելու: Սակայն կայ ներքին գեղեցկութիւն մը – ճշմարիտ գեղեցկութիւն մը, որ կը տեւէ միշտ – անոր մէջ որ «Տէրոջմէ կը վախնայ» (Կ. 30):

**Արդարութիւն արտին մէջ կը ստեղծէ
գեղեցկութիւն նկարագրի մէջ:**

Աստուծոյ Ձեռով Ամուսնութիւն

Կարդա՛
Ծ'ննդոց 2. 18-25

Ատոր համար մարդը
հայրն ու մայրը պիտի
թողու եւ իր կնոջ պիտի
յարի, ու մէկ մարմին
պիտի ըլլան:
—ԾՆՆԴՈՅ 2. 24

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Յետև 4-6
- Ղուկաս 1. 1-20

Ամուսնութիւնը կը ստեղծէ նոր ընտանիք մը երկու հոգիներէ բաղկացած: Աղամ ըսաւ.— «Այս անգամ ասիկա ոսկորէս ոսկոր ու միսէս՝ միս է... Ատոր համար մարդը հայրն ու մայրը պիտի թողու եւ իր կնոջ պիտի յարի (Ծ'ննդ. 2. 23-24):

Ամուսնութիւնը կը հայթայթէ մաքուր ելք մը հրաշալիօրէն ծրագրուած փափաքի մը: «Բայց պոռնկութենէն խուսափելու համար՝ իւրաքանչիւր մարդ թող իր կինը ունենայ, եւ ամէն կին թող ունենայ իր ամուսինը» (Ա. Կորնթ. 7. 2):

Ամուսնութեամբ կը կազմուի փոխադարձ օգտակար կենակցութիւն մը: «Անոր ամուսինին սիրտը անոր վրայ վստահութիւն ունի...: Անոր բարիք կ'ընէ, եւ ոչ թէ չարիք, ամբողջ իր կեանքի տեւողութեամբ» (Առակ. 31. 11-12):

Ամուսնութիւնը Տէրունական հաստատութիւն մըն է, ուր այր եւ կին կը միաւորուին Աստուծոյ անունով եւ զԱստուած կը փառաբանեն իրենց կեանքով:

Աստուած ստեղծեց առաջին այրն ու կինը գիրար ամբողջացնելու համար:

Ի շխանուհի Հարսը ֆիլմին մէջ, ամուսնութեան տեսարան մը կայ, ուր գոյգը պսակող կղերականը կ'ըսէ.— «Ամուսնութիւնը... ան է, ինչ որ մեզ իրարու կը միացնէ այսօր»: Սրամտութեամբ մը ըսուած այդ խօսքը մեծ ճշմարտութիւն մը կը պարունակէ իր մէջ: Ամուսնութիւնը իսկապէս մեծ միացնող մըն է: Անիկա հանդիսաւոր, յարգալի հաստատութիւն մըն է Աստուծոյ կողմէ ստեղծուած, որ մարդ մը եւ կին մը իրարու կը միացնէ սքանչելի միաւորումով մը:

Երբեմն լաւ է յիշել ամուսնութեան այն մեծ ծրագիրը, որուն մասին կը խօսի Աստուածաշունչը:

Մաքուր Եւ Անխարդախ Կարօ

Կարդա՛
Գործք 15. 1-11, 19-21

Նորածին երախաներու
պէս տեճացէ՛ք
Աստուծոյ Խօսքին
անխարդախ կաթինց,
որպէսզի աճիք անով:
—Ա. Պետրոս 2. 2

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Յետև 7-9

■ Ղուկաս 1. 21-38

Ուրիշ տեսակի խարդախութիւն է, երբ մարդիկ իրենց ուզած բաները կ'աւելցնեն Աստուծոյ Խօսքին մէջ, ինչպէս Պետրոս Առաքեալ կը բացատրէ.— «Աստուծոյ խօսքին անխարդախ կաթին» (Ա. Պետ. 2. 22) ակնարկելով: «Մաքուր» բառը կը նշանակէ մէջը ուրիշ բան չխառնուած, անխարդախ կամ «չապականուած»: Առաջին եկեղեցին թլփատուածեան հարցը կը դիմադրաւ: Ոմանք կը պնդէին, թէ թլփատուածիւնը պայման էր փրկութեան համար (Գործք 15. 1): Ուրիշներ կը մերժէին այդ տեսակէտը, որովհետեւ նման բան մը չէր յիշուած Աստուծոյ Խօսքին մէջ: Այնտեղ կ'ըսուէր, թէ փրկութիւն կարելի էր միայն Աստուծոյ շնորհքով: Պետրոս Առաքեալ կը քաջալերէ իր հաւատացեալ եղբայրները.— «Ինչո՞ւ կը փորձէք Աստուած, աշակերտներուն վիզին վրայ դնելով այնպիսի լուծ մը... Մենք կը հաւատանք, թէ Տէր Յիսուսի շնորհքով պիտի փրկուինք» (Գործք 15. 10-11):

Եթէ Աստուծոյ խօսքէն աւելի բան մը կայ ուսուցումի մը մէջ, կրնայ մահացու ըլլալ մեր հոգեւոր կեանքին:

**Աստուծոյ Խօսքը ոչ յաւելումի եւ ոչ հանումի
պէտք ունի:**

Վերջերս ի յայտ եկաւ, թէ կարգ մը կաթ արտադրող ընկերութիւններ՝ Ջինաստանի մէջ, կոպու կաթին մէջ քիմիական նիւթ մը խառնելով կը ծախեն, որպէս թէ այդ նիւթով կաթին բնասպետը արուեստականօրէն աւելի լաւ պիտի ըլլար: Այդ խարդախութեան որպէս հետեւանք, շատ մը մանուկներ մեռան եւ ուրիշներ լրջօրէն հիւանդացան: Նոյն ձեւով, 40 տարիներէ ի վեր, կարգ մը երկիրներու մէջ քիմիական նիւթեր կը խառնեն կենդանիներու կերին մէջ, նոյն նպատակին համար, երբեմն պատճառ դառնալով կենդանիներու մեռնելուն:

Հեռագրել Աստուծոյ

Կարդա՛
Կողոսացիս 1. 3-12

Ձեռք դադրիր աղօթելէ
ձեզի համար:
— Կողոսացիս 1. 9

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Յետև 10-12
- Ղուկաս 1. 39-56

Վաչինկլթըն Փոսթ թերթին մէջ երեւցած յօդուած մը կ'ըսէր, թէ 15 տարեկան պարմանուհի մը, մէկ ամսուան մէջ 6473 պատգամներ դրկած եւ ստացած էր իր բջիջային հեռախօսին միջոցաւ: Երբ անոր հարց կը տրուի այդ մասին, անոր պատասխանը կ'ըլլայ. — «Ես կը մեռնիմ եթէ չարունակ չհաղորդակցիմ բարեկամներուս հետ»: Այդ աղջիկը բացառութիւն մը չէ: Ուսումնասիրողներ կ'ըսեն, թէ Միացեալ Նահանգներու պատանիներն ու պարմանուհիները, միջին հաշուով 2200 պատգամներ կը փոխանակեն իրենց բջիջային հեռախօսին միջոցաւ, իւրաքանչիւր ամիս:

Այս բջիջային հաղորդակցութիւնները ինծի կը յիշեցնեն, թէ ինչ պէտք է ըլլայ եւ կրնայ ըլլալ աղօթքի մեր յարաբերութիւնը Աստուծոյ հետ, որպէս հաւատացեալներ: Պօղոս Առաքեալ կը թուի ուրիշներու համար շարունակ աղօթող մը ըլլալ, երբ կ'ըսէ. — «Ձեռք դադրիր աղօթելէ ձեզի համար» (Կող. 1. 9): Աւելին, ան կ'ըսէ. — «Ամէն ատեն աղօթեցէ՛ք հոգիով, ամէն տեսակ աղօթքով եւ աղերսանքով» (Եփես. 6. 18): «Անդադար աղօթք ըրէ՛ք» (Ա. Թես. 5. 17): Սակայն, ինչպէ՞ս կարելի է ատիկա ընել:

Միտիոնար մը կը նկարագրէ իր սովորութիւնը աղօթքի եւ կ'ըսէ, թէ ինք ունի մարդոց «արձակող» աղօթքներ, երբ անոնց հանդիպելու ըլլայ օրուայ ընթացքին: Ձեռով մը, ան կը «հեռագրէ» Աստուծոյ՝ անոնց փոխարէն: Ան կը հաւատար, թէ աղօթքը ամենէն զօրաւոր ոյժն է աշխարհի վրայ: Որպէս հաւատացեալներ, պէտք է աղօթենք առանց դադրելու: Թերեւս այն՝ ինչ որ Առաքեալը կը ստիպէ մեզի համար ընել, կարելի է ընել:

Աղօթքը կրնայ բնական ըլլալ ինչպէս մեր շնչելը:

Քուրանի Նշան

Կարդա՛
Բ. Կորնթ. 2. 14-17

Բայց գոհութիւն Աստուծոյ... Զիցք ճանչնալու ճոտը մեզմով յայտնի կ'ընէ:
—Բ. Կորնթ. 2. 14

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ
ՏՈՐՈՒՆ ՄԷՉ
■ Յետև 13-15
■ Ղուկաս 1. 57-80

նեղ իրենց յարմարող լաւագոյն անուշահոտը ընտրելու: Անոր նպատակն է, որ իւրաքանչիւր կին պէտք է յիշուի իրեն յատուկ անուշահոտով մը:

Բուրումի նշանի գաղափարը նոր բան մը չէ: Աստուած ուզեց, որ այդ մաս կազմէ պաշտամունքի: Ուխտի տապալանակին մէջ որոշ չափով անուշահոտ պէտք էր գործածուէր Տէրը յիշեցնող (Ելից 30. 34-35): Ժողովուրդին համար արգիլուած էր այդ անուշահոտը գործածել՝ բացի պաշտամունքի ստեղծ (Կ. 37-38): Այս գաղափարը կը շարունակէ գործածուիլ նոր ուխտին մէջ ալ, սակայն ապշեցնող տարբերութեամբ: Փոխանակ այդ խունկը գործածուելու, որ մարդիկ յիշեն զԱստուած, այս անգամ Աստուած ինք կը գործածէ հաւատացեալները որպէս իր «բուրումի նշանը», աշխարհի համար (Բ. Կոր. 2. 14-15): Երբ Աստուած կը նոյնացնէ ինքզինք մեզի հետ այսպիսի զօրաւոր կերպով, պէտք է հարց տալ, թէ «Մարդիկ ի՞նչ կը խորհին Աստուծոյ մասին, երբ մեզի հետ ըլլան»:

Աստուծոյ համար ապրուած կեանք մը հաճելի եւ բուրումնաւէտ խումկի նման է:

Չեա կրնար տեսնել եւ լսել զայն, կամ դպչիլ անոր, սակայն, հոտը զօրաւոր բան մըն է: Օրինակ, կարգ մը իրերու, ծաղիկներու, անուշահոտերու հոտերը մեր մէջ կ'արթնցնեն հին յիշատակներ, որոնք կը տանին մեզ դէպի անցեալը, յիշելով մարդիկ եւ վայրեր, որոնք պիտի չյիշէինք այլապէս:

Կարգ մը հանրայայտ մարդիկ անուշահոտեր ունին իրենց անունով: Երբեմն դերասանուհիներ կամ երգիչներ կը զանազանուին իրենց անունը կրող անուշահոտով: Այս հարցով, թերթ մը հրատարակած էր քննութեան մը արդիւնքը, որպէսզի կարելի ըլլայ ընթերցողներուն օգ-

Ամենագէշ Կարելի Պատահարը

Կարդա՛
Յոբ 1. 13-22

Երբ զիս փորձէք, ոսկիի
պէս պիտի ելլեմ:
—Յոբ 23. 10

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԿՐԿ
ՏԱՐՈՒՆ ԿՐԿ

■ Յետև 16-18

■ Դուկաս 2. 1-24

տուլթեամբ: Օրինակ, դրամական կորուստ, մանուկի մը կամ կենակիցի մը մահը, քաղցկեղ, կամ այլ կորուստստներ եւ դժուարութիւններ:

Յոբի գիրքը նման սերտողութեան արժանի պարագայ մըն է: Այնտեղ եւս ամենագէշ կարելի պատահարին կը հանդիպինք: Սակայն Յոբ իմաստութեամբ կը նայի հարցին եւ Աստուծոյ դերը եւ կամքը կը փորձէ տեսնել իր ունեցած մեծ կորուստին եւ ցաւալի առողջութեան մէջ: Յոբ կ'ըսէ:— «Ան գիտէ իմ ճամբաս, երբ զիս փորձէ, ոսկիի պէս պիտի ելլեմ» (Յոբ. 23. 10): Այս իմաստուն խօսքէն կրնանք սորվիլ երկու կարեւոր դասեր:— Ինչ բանէ ամենէն աւելի կը սոսկանք որ կրնայ գործածուիլ փորձի ենթարկելու մեր նկարագիրը եւ մեզի աւելի զօրացնելու: Երկրորդ, Աստուած մեզի պիտի ապահովէ բաւարար զօրութիւն եւ մխիթարութիւն մեր գտնուած վիճակին մէջ: Կառչինք Աստուծոյ: Ան խոստացած է մեզի համար գործել նոյնիսկ ամենագէշ կարելի պատահարին մէջ:

Ապրող Աստուած կրնայ վերցնել այն վախը, որ տեղ կը գտնէ մեր կեանքին մէջ:

Շատ Աւելի Լաւ

Կարդա՛
Յայտն. 21. 1-4

(Աստուած) պիտի սրբէ
անոնց աչքերէն բոլոր
արցունքները, ալ մահ
պիտի չըլլայ, ոչ սուգ,
ոչ գոչիւն:
—Յայտն. 21. 4

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Յետև 19-21

■ Դուկաս 2. 25-52

Կ'երթայ իր Երկնային Տունը՝ իր Աստուծոյն հետ ըլլալու,
որուն այնքան շատ սիրած էր իր տկարացած մարմինով,
բայց զօրաւոր հոգիով:

Մի քանի օրեր ետք, երբ իր ձեռատետրը աչքէ կ'անցընէի,
իր բառերը միտքս եկան.— «Այսօր շատ աւելի լաւ է»:
Ժպտեցայ արցունքներուս մէջէն, այն գիտակցութեամբ,
թէ այդ հոգեւոր հովիւը կեանքի մը փորձառութիւնը
ունէր, «Շատ աւելի լաւ» (Փիլիպ. 1. 23):

Օր մը, մենք որ Յիսուսի անունը կը կանչենք, մենք
ալ պիտի երթանք այն վայրը՝ «ուր ալ մահ պիտի չըլլայ,
ո՛չ սուգ, ո՛չ գոչիւն»: Անիկա տեղ մըն է, ուր այլեւս
ցաւ չկայ, եւ ուր սիրող Հայր մը խոստացած է,— «Սրբել
(մեր) աչքերէն բոլոր արցունքները» (Յայտ. 21. 4):

Այն կեանքը, որ կ'ուենանք հոս՝ ամէնը չէ այն՝ ինչ
որ կայ: Կայ շատ, շատ աւելի լաւ տեղ մը, որ Յիսուս կը
պատրաստէ բոլոր անոնց համար, որոնք կը հաւատան
իրեն եւ կը սիրեն Ձինք (Յովհ. 14. 2-3):

Երկիւմքը՝ վայր մըն է, ուր չկայ ոչ ցաւ, ոչ գիշեր,
ոչ մահ, եւ ոչ ալ արցունք:

Անձնական Նամակ Մը

Կարդա՛
Սաղմոս 119. 97-104

Որչափ կը սիրեմ քու
օրէնքդ, ան է ամէն օր
իմ խոյովմս:
—Սաղմոս 119. 97

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Յետև 22-24
- Ղուկաս 3

Սորէն Քիրքըկարտի, Աստուածաշունչը անգին սիրոյ նամակ մըն է մեր Երկնաւոր Հօր կողմէ՝ Իր զաւակներուն ուղղուած: Ի՞նչ է Աստուածաշունչը քեզի համար: Կը խորհի՞ս թէ ան պարզապէս Հին եւ իւրայատուկ գիրք մըն է, ճանչցուած իր պատմական եւ կրօնական արժէքներով: Կամ դուն ալ կ'ընդունի՞ս զայն որպէս անձնական նամակ մը Երկնաւոր Հօրդ կողմէ քեզի հասած, իբր իր տեսակին մէջ իւրայատուկ նամակ մը: Արդեօք կը կարդա՞ս զայն յաճախ՝ ամէն օր, այնտեղ գտնելով միշտ քեզ ներշնչող եւ քաջալերող նոր բաներ, որոնք կ'ազդեն վրադ:

Եթէ ժամանակէ մը իվեր չես զգար Աստուծոյ սիրոյ այդ նամակին քեզի խօսիլը, փորձէ շաբաթ մը շարունակ կարդալ Սաղմոս 119-ը որպէս փառաբանութեան քայլերդ Աստուծոյ Խօսքին: Շուտով պիտի զգաս, թէ Աստուածաշունչը քեզի իմաստուն կ'ընէ եւ կ'օգնէ քեզի, որ կարենաս ոտքերդ հեռու պահել գէշ ճամբաներէ (Կ. 98, 101): Ան «քաղցր պիտի ըլլայ քու քիմքիդ» (Կ. 103):

Լաւ կարդացուած Աստուածաշունչ մը, լաւ
ընկերակից մըն է՝ լաւ սնած հոգիի մը:

Սիրող Աստուած

Կարդա՛
Ա. Յովհ. 4. 7-21

Սիրելի՜նե՛ր, եթէ
Աստուած այսպէս սիրեց
մեզ, մենք ալ
պարտաւոր ենք սիրել
գիրար:
—Ա. Յովհ. 4. 11

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Դատարաց 1-3
- Ղուկաս 4. 1-30

Կ'ընէր այդ օրերուն մեզի համար սուղ արժող ծաղկեփունջին գինը - նոր ամուսնացած եւ տակաւին Աստուածաբանական ճեմարանի ուսանող գոյգի մը համար: Տարիներ ետք հասկցայ, թէ կինս աւելի սիրուած կը զգար իրեն հանդէպ իմ ցուցաբերած սիրալիր վերաբերմունքէս եւ տրամադրած ժամանակէս:

Արդեօք մեզի երբեք նիւթ եղած է, թէ Աստուած ինչպէ՞ս կ'ուզէ որ ցոյց տանք իրեն, թէ Ձինք կը սիրենք: Սա խօսքը կրնայ ուղեցոյց մը ըլլալ մեզի.- «Ան որ Աստուած կը սիրէ, իր եղբայրն ալ պէտք է սիրէ» (Ա. Յովհ. 4. 21): Եւ հարցը շատ պարզ է: Առաջին եւ հիմնական ձեւերէն մէկը մեր սէրը Աստուծոյ հանդէպ ցոյց տալու Քրիստոսով, մեր քոյրերն ու եղբայրները սիրելն է: Երբ մենք անկեղծօրէն եւ հարազատօրէն սիրենք գիրար, մեծ ուրախութիւն պատճառած կ'ըլլանք մեր Երկնաւոր Հօր:

Ուրեմն, առիթ չփախցնենք յայտնելու Յիսուսի, թէ Ձինք կը սիրենք: Ինք արժանի է անոր՝ ինչ ալ ըլլայ անոր գինը:

Աստուծոյ ցոյց տալու համար սէրդ, քաժնկցիք սէրդ ուրիշներու հետ:

Մեր ամուսնութեան սկզբնական շրջանին, ես կը խորհէի, թէ շատ լաւ գիտէի ամենակարճ եւ վերջին ճամբան կնոջս սիրտը հասնելու: Գիշեր մը տուն հասայ փունջ մը կարմիր վարդեր կռնակիս ետեւ պահած: Երբ ժպտալով ներկայացուցի ծաղկեփունջը, հոտոտաց ծաղիները եւ ապա տարաւ զանոնք խոհանոց: Չցուցադրեց այնքան գնահատանք որ կ'ակնկալէի:

Իսկութեան մէջ եղածը տեսակ մը ծանօթացման դաս մըն էր, թէ ծաղիկները կնոջս համար առաջնահերթ լեզուն չէին սիրոյ արտայայտութեան: Թէեւ ան գնահատեց ժեստս, սակայն միտքին մէջ հաշիւ

Աստուած Պէտք Ունի Քեզի

Կարդա՛
Մարկոս 11. 1-7

Եթէ մէկը ըսէ ձեզի--
«Այդ ի՞նչ կ'ընէք»,--
ըսէք, «Տէրոջը պէտք
է»:
—Մարկոս 11. 3

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Դատարաց 4-6
- Ղուկաս 4. 31-44

գերքի Արարիչը պէտք ունի մեզի եւ կը փափաքի յարմարեցնել մեր տեղը իր յաւիտենական ծրագրին մէջ: Թէեւ Ան ամենազօր է եւ ոչ մէկ ձեւով կախեալ որեւէ արարածէ, Ան կ'ընտրէ ամենէն խոնարհ դասակարգէ մարդիկ յառաջ տանելու իր ծրագիրը: Եթէ այդպէս չըլլար, Ան մեզի երկինք պիտի չ'առներ անմիջապէս որ մեզ փրկեր իր շնորհքով:

Մէկը Հարցուցած է Ֆրանսիս Ասիսին, թէ ինչպէ՞ս այդքան մեծ գործեր կրնար առանձին իրագործել: Ան կը պատասխանէ.-- «Տէրը երկինքէն վար նայեցաւ եւ ըսաւ.-- "Ո՛ր կրնամ գտնել ամենատկար եւ ամենափոքր մարդը երկրի վրայ": Յետոյ ան տեսաւ զիս եւ ըսաւ.-- "Ես գտայ զայն: Ես պիտի գործեմ իր միջոցաւ, եւ ինք Հպարտ պիտի չըլլայ ատոր Համար: Ան պիտի զգայ, թէ ես զինք կը գործածեմ պարզապէս իր անկարեւորութեան Համար":»

Դուռն կրնաս շատ փոքր երեւնալ քու աչքերուդ առջեւ, բայց Աստուած պէտք ունի քեզի:

Իր յաղթական մուտքը Երուսաղէմ իրագործելու Համար, Յիսուս ընտրեց էջ մը իր արքայական ճամբորդութեան Համար: Իր աշակերտներուն պատուիրած էր որ ըսեն-- «Տէրոջը պէտք է» (Մարկոս 11. 3): Տարօրինակ չէ՞՞ արդեօք, երբ Աստուծոյ Որդին գործածէ այսքան պարզ եւ ցած աստիճանի միջոց մը իր նպատակը իրագործելու Համար: Հեղինակ մը ակնարկելով այս եղածին, ըսած է.-- «Յիսուս մեզի կու գայ՝ մեզի տարօրինակ թուող ձեւով եւ մէկդի կը դնէ մեր ամէն տեսակի չքմեղանքները եւ կ'ըսէ-- «Ես քեզի պէտք ունիմ»:

Կ'արժէ մտածել այս մասին: Տիե-

Աստուած կը փնտռէ սովորական մարդիկ արտասովոր գործի համար:

Գոհու՞թի՞ն Աստուծոյ

Կարդա՛
Սաղմոս 105. 1-5

Ծնորհակալ եղէ՛ք
Տէրոջմէ՛ն:
—Սաղմոս 105. 1

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷ՛Կ
ՏԱՐՈՒՆ ՄԷ՛Ջ

- Դատարաց 7-8
- Դուկաս 5. 1-16

Հնորհակալութեան խօսք մը իսկապէս կը պայծառացնէ մեր օրը: Ոչ միայն այդքան, մեր յարաբերութիւններն ալ մեր գործակիցներուն հետ կը բարելաւուին եւ կը զգանք թէ մեր աշխատանքը նպատակին կը ծառայէ:

Ամէն մարդ կը սիրէ որ մարդիկ իրենց շնորհակալութիւն յայտնեն: Նոյնիսկ մեր Երկնաւոր Հայրը կ'ուրախանայ երբ իրեն շնորհակալութիւն կը յայտնենք: Իր կամքն է, որ մենք իրեն շնորհակալութիւն յայտնենք: Առաքեալը կը պատուիրէ ըսելով.— «Ամէն բանի մէջ շնորհակալ եղէք, որովհետեւ այս է Աստուծոյ կամքը ձեզի հանդէպ՝ Քրիստոս Յիսուսով» (Ա. Թես. 5. 18): Եբրայեցիներու նամակին հեղինակը մէկ քայլ աւելի անդին կ'երթայ եւ կ'ըսէ.— «Շնորհակալ ըլլանք... Աստուծոյ... ակնածանքով եւ բարեպաշտութեամբ» (Եբր. 12. 28):

Արթուն ըլլանք եւ Աստուծոյ հետ մեր յարաբերութիւնները զօրացնենք: ԶԱստուած պաշտելու եւ փառաբանելու ամենէն հիմնական ձեւը իրեն «Շնորհակալ եմ» ըսելն է:

Ամենէն ընդունուած պաշտամուտքն Աստուծոյ կողմէ, կուգայ գոհունակ սրտէ մը:

Զհաց Մեր Հանապագորդի ծառայութեան մէջ եղող մեր խմբակը կազմակերպած է օգտակար եւ քաջալերական ծրագիր մը, որ կը կեդրոնանայ երախտագիտութեան վրայ:

Երբ գործաւորներէն մէկը նկատէ ուրիշ գործաւորի մը լաւ գործընելը՝ գործատեղիէն ներս, շնորհակալագիր մը կու տայ անոր, գնահատանքի խօսքերով: Որքա՛ն լաւ կը զգայ մարդ, երբ առտու գրասենեակ կը մտնէ եւ սեղանին վրայ կը գտնէ շնորհակալագիր մը:

Լաւ կատարուած գործի մը համար շնորհակալութիւն ստանալը իսկապէս քաջալերական երեւոյթ է: Սրտանց եւ անկեղծօրէն ըսուած

Հիմա Հառաչանք՝ Ետըր Փառք

Կարդա՛
Հոովմ. 8. 16-30

Մեր թերթել վայրկե-
նական տառապանքը՝
մեզի համար կը
պատրաստէ գերազանց
ու յախտեցական փառք:
—Բ. Կորնթ. 4. 17

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Դատարաց 9-10
- Դուկաս 5. 17-39

Անգամ մը լսեցի քրիստոնէա-
կան համադումարի մը մասին,
որուն նիւթն էր.— «Ինչպէ՞ս Կարելի
է Ապրիլ Հոգեւոր Ճնշումէ Զերծ
Կեանք մը»:

Այսպիսի անիրապաշտ յոյս մը,
զիս հոգեկան ճնշումի տակ դրաւ:
Այսուհանդերձ, բոլորս ալ կ'ուզենք
հեռու մնալ կեանքի ճնշումներէ:

Հաւատացեալ բարեկամ մը,
որուն ընտանիքը դժուարին պայ-
մաններէ կ'անցնէր, կը խորհէր, թէ
Աստուած այս անգամ աննկատ
ձգած էր իրենց ընտանեկան հարցը:
Բարեկամս կ'ըսէր.— «Ես չարաչար
աղօթեցի եւ խոստումներ կատարեցի
Աստուծոյ, բայց բան մը չփոխուե-

ցաւ: Զիս յուսահատեցնող պարագան այն է, թէ գիտեմ
Աստուած զօրութիւն ունի մեզ դուրս բերելու ընտանեկան
այս տաղնապէն: Ան ըրած է այդ մէկը անցեալին, բայց
այս անգամ, չեմ գիտեր ինչո՞ւ, Աստուած լուռ է»:

Հեղինակ մը կ'ըսէ.— «Մեր միակ յոյսը լման փրկութեան
մեր կեանքի դժուարութիւններէն եւ նեղութիւններէն,
Յիսուսի հետ երկիրք երթալն է: Մինչեւ այն ատեն, մենք
կը յառաչենք, կամ կը ձեւացնենք, թէ նեղութեան մէջ
չենք: Ներկայ քրիստոնէութիւնը շատ յաճախ կը փորձէ
մեզ այդ հառաչանքէն հեռու պահել»:

Բարեկամս կը հառաչէ եւ չի ձեւացներ, թէ չի հառաչեր:
Բայց իրողութիւնը այն է, թէ բան մը կը փոխուի, եւ
այդ բանը ինքն է: Առաքեալը կը վստահեցնէ, թէ մեր
ներկայ տառապանքները ոչինչ կը նկատուին գալիք
փառքին հետ բաղդատելով (Բ. Կորնթ. 4. 17):

Հիմա կը հառաչենք թէեւ, բայց մեր առջեւ փառքի
օրեր կան եւ անոնք օր մը պիտի գան (Հոովմ. 8. 18):

**Աստուած երբեմն արգելք մը կը գործածէ մեզ
յառաջ մղելու համար:**

Ներողամտութեան Գեղեցկութիւնը

Կարդա՛
Ղուկաս 15. 11-24

Մինչ ինք դեռ շատ
հեռու էր, հայրը տեսաւ
զայն եւ գթաց, եւ
վազելով... համբուրեց
զայն:
—Ղուկաս 15. 20

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Դատարաց 11-12
- Ղուկաս 6. 1-26

գողէճի մը մէջ: Լէրի իր բացման խօսքին մէջ ըսաւ.—
«Արուեստասէրներ աւետարանչութիւն ըրին մեզի, եւ մենք
այս ձեւով, կը յուսանք, թէ անոնց գործերը աւետարան-
չութիւն ըրած պիտի ըլլան ուրիշներուն»:

Մինչ կը հիանայի ցուցադրուած պատկէրներուն վրայ,
յուզուեցայ Անառակ Որդիին դարձի գալու զօրաւոր կարի-
քով, անոր ապաշխարութեամբ ու հօրը այնքան յուզիչ
եւ գեղեցիկ ներողամտութեամբ, որոնք բոլորն ալ տարբեր
արուեստի կտորներով ներկայացուած էին:

Մենք բոլորս ալ, որոշ չափով, եղած ենք անառակ
որդիին պէս: Մենք տարբեր ծրագիրներ ունեցած ենք մեր
կեանքին համար, մեր Երկնաւոր Հայրը տարբեր (Հռովմ.
3. 10-12): Մենք փախած ենք Աստուծմէ, սակայն, Ան
միշտ պատրաստ է ընդունելու մեզ: Մենք ալ պիտի
տեսնենք ներողամտութեան գեղեցկութիւնը մեր Երկնային
Հօր դէմքին վրայ, երբ աղերսենք իրեն.— «Հայր,
մեղանչեցի...» (Ղուկ. 15. 18):

**Երբ Ատուած Ընրէ, Ան մեղքը կը վերցնէ եւ կը
դարմանէ հոգին:**

Հաւաքածոյ մը կազմելու աշխա-
տանքը՝ Լէրիին եւ Մէյրիին
համար, հետզհետէ աճելով վերածուե-
ցաւ առաքելութեան մը: Անցնող
10 տարիներու ընթացքին անոնք
կը հաւաքէին արուեստի գործեր
հիմնուած Անառակ Որդիի առակին
վրայ (Ղուկաս 15): Այդ հաւաքածոն
կը պարունակէ արուեստագէտ
Ռէմպրանտի գեղեցիկ գծանկարը եւ
այլ արուեստագէտներու գործեր,
որոնք բոլորն ալ կը պատկերացնեն
Անառակ Որդիին պատմութիւնը:

Լէրի եւ Մէյրի ուզեցին իրենց
հաւաքածոն բաժնեկցիլ նաեւ ուրիշ
մարդոց հետ: Ուրեմն ցուցահանդէս
մը կազմակերպեցին տեղական